*մի երկիր այնքան վտանգ է ներկայացնում ընդհանուր խաղաղութեան համար, որչափ սովետական Ռուսիան, եւ նա գլխաւոր պատասխանատուն է անցեալ մեծ պատերազմից յետոյ յարատեւող այս ընդհանուր տնտեսական, փինանսական ու քաղաքական ջղայնութեան, որ հեւ ի հեւ է պահում ազգերին:*

*Մոսկուան խօսքով, ճառերով պետութիւնների իմպերիալիզմի դէմ է ծառանում, բայց իր արտաքին քաղաքականութիւնը ոչընչով տարբեր չէ ցարական իմպերիալիզմից:*

*Ճնշուած ազգերի ազատագրութիւնն է պահանջում բարձրաձայն, եւ իր իշխանութեան տակ ընկած ժողովուրդների ազատական կամքը փշրում ցարիզմից շատ աւելի նենգ, ու աւելի անողորմ բռնութեամբ ու մեթոդներով: Պատմութեան մէջ առաջին անգամն է, որ անլուր սարկութեան լծի տակ կորացած ժողովուրդները նոյնիսկ լացի ու ողբի իրաւունքը չունեն, սովետական ռեժիմի դաժանութեան տակ ծնկաչոք ազգերը միայն պիտի խնդան ու քրքջան խելագարների պէս:*

*Աշխատաւորութեան, պրոլետարիատի ազատագրումն ու իշխանութիւնն են հռչակել Սովետները, եւ դեռ երբեք բանւորը, քրտնաթոր վաստակաւորը չի եղել աւելի իրաւազուրկ, աւելի շահագործուած եւ աւելի թշուառ, քան այսօր Ռուսիայում:*

*Հակասութիւնների եւ կեղծիքի այս շարանը կարելի է երկարել անվերջ. այսքանն էլ բաւ է սակայն եզրակացնելու համար, որ բոլշեւիզմը ռուս գրող Անդրէեւի նկարագրած այն տանն է նման, ուր թէեւ մարդիկ ողջ են եւ չեն մեռել, բայց արդէն դագաղի պէտք է ըզգացւում:*

## ՃԱՌԱԳԱՅԹԸ

Ուրախացան կինները, խնդացին ուժգին,
Որ թառամեր էր ճակատս սիրուն,
Որ ցաւն ամենուն, յոյզերն ուրիշին
Փոք փոք էր դրեր քերնիս անկիւնին:

Բայց երբ լոյս փայլեց ճակատէս տժգոյն,
Զարմացան անոնք, տխրեցան խսկոյն.
Ուրիշի վէրքով արիւնող սիրտս
Ճառագայթ էր ցաներ ճակտիս փոսերուն...

ՊԵՐՃՈՒՀԻ